

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ
ԱՄԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИ МАРЗ
ЭЧМИАДЗИНСКИ РЕГИОН
СЕЛЬСКАЯ ОБЩИНА АМБЕРД

N 01-54
«02» ՀՈՒՆԻՍԻ 2012թ


ՀԵՌ.(093) 32-59-62
ՏԵԼ.(093) 32-59-62

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՍԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ՝ Ա. Ղահրամանյան
Կից ներկայացնում ենք Ձեզ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդի
գյուղական համայնքի ղեկավարի 2012 թվականի հունիս ամսվա ընթացքում ընդունած
որոշումները և արձակած կարգադրությունները:

Առդիր 3 թերթ:

Համայնքի ղեկավարի
պաշտոնակատար  Լ. Վարդանյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 5-Ա

«12» ՀՈՒՆԻՍԻ 2012Թ.

Գ. ԱՄԲԵՐԴ

ԱՆՉԱՓԱՀԱՍ ՆԱԻՐԱ ՍԵՅՐԱՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդ համայնքի Կոմիտասի փողոցի 5 տան բնակիչ՝ Արսեն Սեյրանի Կարապետյանը դիմել է իր անչափահաս քրոջ՝ Նաիրա Սեյրանի Կարապետյանի /ծնվ. 01.09.1998./ նկատմամբ հոգաբարձու ճանաչելու մասին:

Նաիրա Սեյրանի Կարապետյանի ծնողները՝ Սեյրան Սենիկի Կարապետյանը և Օֆիկ Պողոսի Կարապետյանը բացակայում են Հայաստանի Հանրապետությունից:

Գործում կան անհրաժեշտ փաստաթղթերը:

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով անչափահասի շահերն ու տարիքը, հիմք ընդունելով գյուցապետարանի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 11 -ի թիվ 1 նիստի արձանագրությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 134 և 135-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 35 և 37-րդ հոդվածների պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդ համայնքի Կոմիտասի փողոցի 5 տան բնակիչ՝ Արսեն Սեյրանի Կարապետյանին նշանակել իր անչափահաս քրոջ՝ Նաիրա Սեյրանի Կարապետյանի /ծնվ. 01.09.1998./ նկատմամբ հոգաբարձու:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար



Ս. Բարայան

2012 թվականի հունիսի 12

Գ. Ամբերդ



ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 6-Ա

«27» ՀՈՒՆԻՍԻ 2012Թ.

Գ. ԱՄԲԵՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 6-Ա

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 26.06.2012 թվականի «Արմավիրի մարզի քաղաքացիական պաշտպանության համակարգի պատրաստականության բերման» վերաբերյալ N 2 որոշման.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ամբերդ համայնքի քաղաքացիական պաշտպանության համակարգը «Բարձր» պատրաստականության աստիճանի բերելու նպատակով.
 - 1.1 հանձնարարել համայնքի ՔՊ շտաբին՝
 - սահմանել ղեկավար կազմի շուրջօրյա աշխատանքային ռեժիմ և աշխատատեղերում ու կառավարման կետերում՝ շուրջօրյա հերթապահության,
 - ստուգել կապի և ազդարարման համակարգի պատրաստականության վիճակը, մարզի ՔՊ շտաբ ներկայացնել հայտ անհրաժեշտ լրացուցիչ կապուղիների վերաբերյալ,
 - իրականացնել քաղաքացիական պաշտպանության պլանի ճշգրտում,
 - պատասխարվողների ընդունման համար նախապատրաստել առկա պաշտպանական կառույցները, իրականացնել բնակչության ամրագրման հաշվարկների ճշգրտում,
 - նյութական միջոցների պաշարների, ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի /ջրաղբյուրներ, արտեզյան հորեր, ՕԿԶ-ներ/ պաշտպանության միջոցառումների նախապատրաստում,
 - լուսաքողարկման ռեժիմի ապահովման նպատակով նախապատրաստական միջոցառումների իրականացում,
 - հատուկ կարևորության և արխիվային փաստաթղթերի նախապատրաստում՝ պահպանման հանձնելու համար /եթե այդպիսիք կան/,
 - 1.2 Տարահանման հանձնաժողովի նախագահին՝
 - նախապատրաստել տարահանման հավաքակայանները և նստեցման կետերը, ճշտել տարահանման և տրանսպորտային միջոցների հաշվարկները,
 - 1.3 ՔՊ ծառայությունների պետերին և կազմավորումների հրամանատարներին՝
 - ճշտել ՔՊ կազմավորումների կազմերը, անհրաժեշտ գույքով և տեխնիկայով հագեցվածությունը, հնարավորինս համալրել և անհրաժեշտության դեպքում հայտ ներկայացնել մարզի ՔՊ շտաբ՝ գույքի և տեխնիկայի պահանջարկի վերաբերյալ,
 - կազմակերպել մարզի ՔՊ գույքի պահեստներից անհատական պաշտպանության միջոցների տեղափոխում բաշխման կետ և բաշխման նախապատրաստում,
 - գյուղատնտեսական կենդանիների և բույսերի պաշտպանության միջոցառումների նախապատրաստում,
 - ճառագայթային և քիմիական իրավիճակի դիտարկումների նախապատրաստում,
 - հակահրդեհային կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում,
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ամբերդ համայնքի քաղաքացիական պաշտպանության պետ,
համայնքապետ



Ս. Բաբայան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1-Ա

«25» ՀՈՒՆԻՍԻ 2012թ.

Գ. ԱՄԲԵՐԴ

ՄԱՆՎԵԼ ԲԱԲԱՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի առաջին մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1384-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի Մարզի Ամբերդի գյուղական համայնքի ղեկավարի Աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգի 18-րդ և 22-րդ կետերով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Ամբերդ համայնքի ղեկավար՝ Մանվել Բաբայանին տրամադրել ամենամյա արձակուրդ 24 աշխատանքային օր (20 աշխատանքային օր նվազագույն և գումարած 4 աշխատանքային օր լրացուցիչ) տեվողությամբ, սկսած 2012 թվականի հուլիսի 1-ից մինչև 2012 թվականի օգոստոսի 3-ը ներառյալ:
1. Համայնքի ղեկավարի աշխատանքային պարտականությունները նշյալ ժամանակահատվածում դնել համայնքի ղեկավարի տեղակալ՝ Լևիկ Վարդանյանի վրա:
2. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավարի՝



Մ. Բաբայան

2012 թվականի հուլիսի 25

Գ. Ամբերդ